Հարցաշար 2024 թ.
«Հայոց Եկեղեցու պատմություն» առարկայի մարզային փուլ
10–րդ դասարան - 120 բոպե
№ 1-8
Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

1. **Թվարկվածներից ո՞րը Տաս պատվիրաններից չէ.** *(0,5 միավոր)*
   1) «Ես եմ քո Տեր Աստվածը … Ինձանից բացի այլ աստվածներ չպիտի լինեն քեզ համար»
   2) «Քո մերձավորի ունեցածի վրա աչք մի՛ ունեցիր»
   3) «Հավատքի մեջ երբեք չթուլանա՛ս»
   4) «Քո Տեր Աստծո անունը զուր տեղը չպիտի արտասանես»

2. **Նշվածներից ո՞վ չորս Ավետարանների հեղինակներից չէ.** *(0,5 միավոր)*
   1) Պետրոս 2) Մատթեոս
   3) Ղուկաս 4) Հովհաննես

3. **Ըստ ավանդության՝ մկրտության ժամանակ ի՞նչ անուն է տվել Ս. Գրիգոր Լուսավորիչը Տրդատ արքային.** *(0,5 միավոր)*
   1) Մովսես 2) Հովհաննես
   3) Պետրոս 4) Թադեոս

4. **Թվարկվածներից ո՞ր արգելքը չի ընդունվել Աղվենի եկեղեցական ժողովում.** *(0,5 միավոր)*
   1) Մահացածների վրա անպարկեշտ լացուկոծ անելու արգելքը
   2) Կախարդությունների արգելքը
   3) Մերձավոր ազգականների միջև ամուսնության արգելքը
   4) Անդրանիկ զավակի քահանա դառնալու արգելքը

5. **Կիլիկյան Հայաստանի ո՞ր թագավորն է հարել կաթոլիկ ֆրանցիսկյան միաբանությանը.** *(0,5 միավոր)*
   1) Հեթում I 2) Հեթում II
   3) Լևոն I 4) Լևոն II

6. **Նշվածներից ո՞ր կարևոր իրադարձությունն է տեղի ունեցել Մկրտիչ Ա. Խրիմյան կաթողիկոսի գահակալության տարիներին.** *(0,5 միավոր)*
   1) Ապարանի ճակատամարտը 2) Շուշիի ազատագրումը
   3) Խանասորի արշավանքը 4) Սարդարապատի ճակատամարտը

7. **Հայոց Եկեղեցին ո՞ր տոնն է հռչակել մանուկների օրհնության օր.** *(0,5 միավոր)*
   1) Ս. Սարգիս 2) Ս. Հարություն
   3) Տյառնընդառաջ 4) Ծաղկազարդ

8. **Հայ Առաքելական Եկեղեցում ինչպե՞ս են ողջունում աբեղային և վարդապետին.** *(0,5 միավոր)*
   1) «Աստված օգնական, Հա՛յր սուրբ» 2) «Աստված օգնական, Սրբազա՛ն հայր»
   3) «Օրհնեցեք, Տե՛ր հայր» 4) «Աստված օգնական, Վեհափա՛ռ տեր»

№ 9-12

Կառուցված պատասխանով առաջադրանքներ

9. *Եկեղեցում ատյանի հյուսիսային կողմում գտնվում է ----------, իսկ արևելյան կողմում՝ բեմը կամ խորանը: (1 միավոր)*

10. *Ս. Վարդան Մամիկոնյանը ---------- կաթողիկոսի թոռն էր: (1 միավոր)*

11. *Նադիր շահի թագադրության արարողության ժամանակ Հայոց ---------- կաթողիկոսը նրա մեջքին է կապել շահական իշխանության խորհրդանիշ սուրը: (1 միավոր)*

12. *Ըստ ռուսական Պետական Դումայի պաշտոնյայի հուշերի ---------- պահանջում էր, որ հայերը մյուս ժողովուրդների նման երդման արարողությունը կատարեն ռուսերեն: (1 միավոր)*

№ 13-14

Համապատասխանեցում պահանջող առաջադրանքներ

13. **Հայոց կաթողիկոսի գահակալման տարեթվերը համապատասխանեցնել նրանց անվանը.** *(1 միավոր)*

1. 1780-1799 թթ.
2. 1858-1865 թթ.
3. 1809-1830 թթ.
4. 1843-1857 թթ.

1	
2	
3	
4	

ա) Մատթեոս Ա. Կոստանդնուպոլսեցի
բ) Ղուկաս Ա. Կարնեցի
գ) Ներսես Ե. Աշտարակեցի
դ) Հովհաննես Ը. Կարբեցի
ե) Եփրեմ Ա. Զորագեղցի

14. **Հայոց Եկեղեցու տոնը համապատասխանեցնել տոնակատարության ժամանակին.** *(1 միավոր)*

1) Քրիստոսի Պայծառակերպության տոն
2) Գյուտ Խաչի տոն
3) Ծաղկազարդ
4) Կաթուղիկե Ս. Էջմիածնի տոն
5) Վարագա Ս. Խաչի տոն
6) Ս. Համբարձման տոն

1	
2	
3	
4	
5	
6	

ա) Հոկտեմբերի 23-29 ընկած կիրակի օրը
բ) Ս. Հարության տոնին նախորդող կիրակի օրը
գ) Օգոստոսի 15-ի մոտակա կիրակի օրը
դ) Ս. Հարության տոնին հաջորդող 65-րդ օրը
ե) Ս. Հարության տոնին հաջորդող 40-րդ օրը
զ) Հունիսի 28-ից օգոստոսի 1-ն ընկած ժամանակահատվածում
է) Սեպտեմբերի 28-ի մերձակա կիրակի օրը

№ 15-17

Աշխատանք սկզբնաղբյուրով

15. *«Կատրամիդե թագուհին, որը ---------- դուստրն էր, բարեպաշտուհի լինելով, կառուցեց Սմբատի հիմնադրած եկեղեցին ամենապայծառ վայելչությամբ, որպես բարձրաբերձ կամարներով զմբեթավորված երկնանման խորան և զարդարեց ծիրանածաղիկ, ոսկեթել նկարազարդ գործվածքներով, արծաթե և ոսկե անոթներով, նաև պայծառ լուսատու անոթների բազմությամբ, որով շողում էր երկնակամարում Անիի Սուրբ Կաթողիկեն»:*

Ու՞մ դուստրն էր թագուհին: **(1 միավոր)**

_____

16. *«Բուղա արաբ զորավարն իր հետ արքունիք տարավ նաև հայոց Սմբատ Սպարապետին: Եվ խալիֆան բազմաթիվ խոստումներ էր տալիս նրան, միայն թե ընդուներ մահմեդականություն: ... Սակայն մեծ սպարապետ Սմբատը, քաջաբար ելնելով ստի դեմ, Քրիստոսի հավատից բնավ չշեղվեց՝ գերադասելով նահատակվել քրիստոնեական հավատի համար: ...»*

Ո՞ր պատմիչի աշխատությունից է մեջբերված հատվածը: **(1 միավոր)**

_____

17. *«Նա շատ մեծ անուն էր հանել, անարատ և արդար մարդ էր, շատ առաքինի, հոետորական գիտության քաջագիտակ, Աստծո Հին ու Նոր Կտակարաններին քաջատեղյակ և ամեն տեսակետից կարող էր օգտակար լինել Քրիստոսի հոտին: ... Նա հայոց ժողովրդի մեջ պայծառացրեց վանական դասը, նա էր, որ վերականգնեց Ս. Գրիգոր Լուսավորչի աթոռը Հայաստանում և փայլեց սրբությամբ և ամենայն պարկեշտությամբ: Նա պահեցող էր և աղոթող»:*

1) Ո՞ր պատմիչի աշխատությունից է մեջբերված հատվածը: *(1 միավոր)*

_____

2) Ո՞ր կաթողիկոսի մասին է մեջբերված հատվածը: *(1 միավոր)*

_____

№ 18-19

Տերմինների, հասկացությունների, պատճառահետևանքային կապերի, փաստերի իմացություն և խմբավորում պահանջող առաջադրանքներ՝ 2 ճիշտ պատասխանով

18. Բերված փաստարկներից ո՞ր երկուսն են սխալ. **(2 x 1 = 2 միավոր)**

1) Կաթոլիկ Եկեղեցու առաջնորդը Հռոմի Պապն է:
2) Հայոց Եկեղեցում քահանայությունից ցածր կան վեց աստիճաններ՝ սարկավագ, դպիր և այլն:
3) Ավանդաբար հայկական եկեղեցիներն ունեն ուղղանկյուն կամ խաչաձև կառուցվածք:
4) Գուգարքի թեմը ընդգրկում է Լոռու և Տավուշի մարզերը, առաջնորդանիստը Իջևանի Ս. Ներսես Շնորհալի եկեղեցին է:
5) Կաթողիկոսի ձեռնադրման և օծման արարողությունը Հայոց Եկեղեցում կատարվում է 12 եպիսկոպոսների կողմից:
6) Դրոշմի խորհուրդը կատարվում է օրհնված ջրով:
7) Քրիստոնեական եկեղեցու երկրորդ մեծ բաժանումը տեղի է ունեցել 1054 թ., որի արդյունքում առաջացան բյուզանդական օրթոդոքս և լատին կաթոլիկ եկեղեցիները:

19. Թվարկվածներից որո՞նք Հայոց Եկեղեցու նվիրապետական աստիճաններից չեն.

(2 x 1 = 2 միավոր)

1) քահանա
2) սարկավագ
3) եպիսկոպոս
4) դպիր
5) կարդինալ
6) կաթողիկոս
7) վարդապետ

20. ***Շարադրանք*** ***(2 միավոր)***

ա. Թվարկե՛ք Հայոց Եկեղեցու խորհուրդները: Դրանցից որո՞նք են պարտադիր քրիստոնյայի համար: Հիմնավորե՛ք ձեր պատասխանը:

բ. Ներկայացրե՛ք Ս. Հաղորդության խորհուրդը. խորհրդի իմաստը, կարգը: